*
* *

Բագուից պ. Յովհաննէս Ադամեանցը իւր հանգուցեալ մօր—խանում Ադամեանցի յիշատակին նուիրելով 400 ռուբլի, խնդրում է 200 ռուբլին յատկացնել ձեմարանին և 200 ռուբլին Մայր Աթոռին։ Տէր լուսաւորեսցէ հոգի հանգուցելոյն։

*
* *

Պ. Առաքել Ծատուրեանցը գրում է Պետերբուրգից։

Բագուից կստանաք 40 ռուբլի 10 օրինակ «Արարատի» բաժանորդագին 1893 թուի համար։

1 օրինակ ուղարկել ինձ Բագու.

1 օրինակ բժիշկ Ադամեանցին Սալեան.

1 օրինակ Բռնակոթ գիւղի ծխական ուսումնարանին.

1 օրինակ Գորիսի ծխական ուսումնարանին.

1 օրինակ Լէյպցիգի հայ ուսանողներին։ Իսկ 5 օրինակը թողնում եմ խմբագրութեանդ տնօրէութեան։

«Արարատի» խմբագրութիւնը որոշեց ի հաշիւ պ. Ծատուրեանցի ուղարկել 1893 թուի «Արարատ»-ի համարները մի օրինակ Մոսկուայի հայ ուսանողներին, 1 օրինակ Փարիզի հայ ուսանողներին, 1 օրինակ Ժէնէվի հայ ուսանողներին, 1 օրինակ Պետերբուրգի հայ ուսանողներին և 1 օրինակ Վան, Սանդխտեան օրիորդաց ուսումնարանին։